ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի, Երկրի հեռահար զոնդավորման ոլորտում մանագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում համագործակցության մասին» Համաձայնագրի կնքման նպատակահարմարության վերաբերյալ

«ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի, Երկրի հեռահար զոնդավորման ոլորտում մանագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում համագործակցության մասին» Համաձայնագրի նախագծի կնքման նպատակահարմարությունը պայմանավորված է ոլորտի նեղ առանձնահատկությունների և կադրային քաղաքականության կատարելագործման հեռանկարների, վերոնշյալ համաձայնագրի շրջանակներում ոլորտի մասնագետների միջև ժամանակակից ուսումնամեթոդական և գիտահետազոտական նյութերի, ուսումնական ծրագրերի, ինչպես նաև միջազգային առաջավոր փորձի փոխանակման լայն հնարավորության ընձեռնումով:

ՀՀ կառավարության որոշման հիման վրա հիմնադրվել է ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ «Ուսումնամեթոդական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի ստեղծման նպատակն է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մասնագետների և աշխատակիցների վերապատրաստումը, վերջիններիս մասնագիտական որակավորման բարձրացումը: Երկկողմ համագործակցությունը կարող է անկյունաքար դառնալ կադաստրի համակարգում քաղաքացիներին որակյալ, արդիական ու օպերատիվ ծառայություններ մատուցելու գործում պատրաստված ու բանիմաց մասնագետներ ունենալու համար: Եվ քանի, որ խնդրո առարկա Համաձայնագրով նախատեսված, այդ թվում ԱՊՀ անդամ պետությունների սույն ոլորտի մասնագետների պատրաստման ուսումնական հաստատություններին աջակցության տրամադրման

աշխատանքների համակարգումը ստանձնել է Գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման ոլորտում մանագետների վերապատրաստման բազային ինստիտուտ համարվող Գեոդեզիայի և քարտեզագրության Մոսկվայի պետական համալսարանը (МИИГАиК), որն ունի բարձր միջազգային ժանաչում և իր ամբողջ գործունեության ընթացքում հանդես է եկել որպես այդ բնագավարի առաջադեմ ուսումնական հաստատություն:

«ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության կադաստրի Երկրի հեռահար զոնդավորման ոլորտում մանագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում համագործակցության մասին» Համաձայնագրի ստորագրումը՝ հաշվի առնելով նաև Ռուսաստանի Դաշնության համապատասխան գերատեսչության հետ մեր բազմամյա և արդյունավետ համագործակցությունը գտնում ենք նպատակահարմար: